ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

«ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍԻԳՏՈՒՆԱՅՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 29-ից մայիսի 3-ը Շվեդիայի Սիգտունա քաղաքում տեղի ունեցավ Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի՝ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի տարեկան հանդիպումը: Ժողովին ներկա էին 18 եվրոպական երկրներից եկած 40 Եկեղեցիների ներկայացուցիչներ, որոնց քննարկման հիմնական թեման էր խաղաղությանը և անվտանգությանը նվիրված հիմնախնդիրները:

Սիգտունայի ժողովին Հայ Առաքելական Եկեղեցուց, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, մասնակցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ և ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

Ապրիլի 29-ի առավոտյան հանդիսավոր կերպով և աղոթքով բացվեց ժողովը: Ժողովականները հաստատեցին նախորդ տարվա զեկույցը և որոշեցին հաջորդ տարվա գործունեության ծրագրերը: Խաղաղության և անվտանգության թեմայով բանախոսելու համար ժողովին հրավիրված էր Ստոկհոլմի Միջազգային խաղաղության հետազոտության ինստիտուտի տնօրեն Ալիսոն Բեյլիսը, ով զեկուցեց առանց սահմաններ ճանաչելու տարածաշրջանային համագործակցության նշանակության մասին՝ որպես հակամարտությունների առաջն առնելու կարևոր մեխանիզմ:

Ժողովի ուշադրությունը կենտրոնացավ տարածաշրջանային համագործակցության վրա: Այն անդրադարձավ նաև Եվրոպական Միության քաղաքական և տնտեսական կարողությունները խաղաղության ու անվտանգության համար ծառայեցնելու հնարավորություններին:

«Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբը Եվրոմիության անդամ պետություններին կոչ արեց մեծացնելու Եվրոմիության ազդեցությունը հակամարտությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու գործում:

Հավարտ ժողովի ընդունվեց մի հայտարարություն, որում ասվում է. «Այս դարում, որտեղ կրոնը հաճախ չարաշահվում կամ ներկայացվում է որպես հակամարտությունները բորբոքող միջոց, «Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբը խաղաղության, անվըտանգության և հաշտեցման բնագավառներում իր աշխա-

տանքն ավելի կընդլայնի՝ մի կողմից եվրոպական հաստատությունների հետ աշխատելով, մյուս կողմից՝ Եկեղեցիների վկայությանը նպաստելով:

«Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի աշխատանքի ծրագրի հիմնական շեշտը այս բնագավառում պետք է լինի հավատքի զորացումը, որն էլ կնպաստի հակամարտությունների կանխարգելմանը և դրանց կարգավորման խաղաղ եղանակներին»:

Մայիսի 1-ի երեկոյան Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը հանդես եկավ բանախոսությամբ և ներկաներին ցուցադրեց Նախիջևանում Հին Ջուղայի խաչքարերի ոչնչացման մասին 6 րոպեանոց մի տեսաերիզ:

Մայիսի 3-ին տեղի ունեցավ ժողովի պաշտոնական փակումը: Եկեղեցական հատուկ արարողության մաս կազմեց Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանի գլխավորությամբ կատարված աղոթքը, որի ժամանակ մասնակիցները հիշատակեցին և մեկ րոպե լռությամբ հարգեցին նույն առավոտյան Երևան-Սոչի չվերթի ավիավթարից զոհվածների հիշատակը:

Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի հաջորդ հանդիպումը Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեղի կունենա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 2007 թ. հունիսի 15-19-ը:

ՍՈՒՐԵՆ ՍՐԿ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին